



Ա. Շահն

Ի. ՍՏԱԼԻՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ  
ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՅԱՆ  
ՄԻԶԱՋԳԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԸ


ԿՈՒԶՐԱՏ  
1 9 3 4



25 JAN 2018

Պրոլետարներ սուրբ յերկիցների, միացեք


## Ի. Ա Ս Ա Լ Ի Ն



Ն. Շ ա մ ի

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈՒԽՈՒԹՅԱՆ  
ՄԻԶԱՋԳԱՅԻՆ ԲՆՈՒՅՑԹԸ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՏԱՄԱՎԱՅՐԻ ԱՂԹԻԿ



ԿԱՊԱՍԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
ՏԵՐԵՎԱՆ  
1 9 3 4

Պատ. խմբ. Ն. Մակինց  
Թարգմ. Պողոս Արքյան  
Տեխ. խմբ. Տ. Խոչլանիշյան

▼  
Կուսնիրատի սպարան, Պատ. № 337  
Գլավլիթի լիազոր № 7885 (р), Հրամ № 256  
Տիրում 6.000

▼  
И. СТАЛИН  
МЕЖДУНАРОДНЫЙ ХАРАКТЕР  
ОКТЯБРЬСКОЙ РЕВОЛЮЦИИ  
Партизат, Эривань



11-24982 9/2

Հոկտեմբերյան հեղափոխությունն «ազգային շըր-  
ջանակներով» հեղափոխություն չե միայն Նա, ամե-  
նից առաջ, ինտերնացիոնալ, համաշխարհային կարգի  
հեղափոխություն ե, վորովիետև նա մարդկության հա-  
մաշխարհային պատության մեջ արմատական շրջա-  
դարձ և նշանակում հին, կապիտալիստական աշխարհից  
դեպի նոր, սոցիալիստական աշխարհը:  
Հեղափոխություններն անցյալում սովորաբար  
նրանով եյին վերջանում, վոր շահագործողների մի  
խումբ կտուավարման դեկի մոտ փոխվում եր շահա-  
գործողների մի ալ խմբով՝ Շահագործողները փոխ-  
վում եյին, շահագործումը՝ մնում Այսպես և յեղել բանը  
ստրուկների ազատագրուկան շարժումների ժամանակ:  
Այսպես և յեղել բանը ճորտերի ազստամբություննե-

ըե շրջանում Այսպես և յեղակ բանը հայտնի ռմեծ հեղափոխությունների շրջանում Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Յես չեմ խոսում Փարիզի կումունայի մասին, վորը յեղել ե պրոլետարիատի առաջին, փառապանծ, հերոսական, բայց և այնպիս՝ անհաջող փորձը՝ պատճռությունը կապիտալիզմի դեմ դարձնելու:

Հոկտեմբերյան հեղափոխությունն այդ հեղափոխություններից սկզբաներին և տարբերվում: Նա իր առջև նպատակ և դնում վոչ թե շահագործման մի ձեւ շահագործման մի այլ ձևով, շահագործողների մի խումբը շահագործողների մի այլ խմբով փոխարինելը, այլ մարդու կողմից մարդու վերաբերմամբ յեղածամեն, մի շահագործում վոչնչացնելը, բոլոր և ամեն տեսակի շահագործողական խմբերը վոչնչացնելը, պրոլետարիատի դիկտատուրա հաստատելը, մինչև այժմ գոյություն ունեցած ճնշված բոլոր դասակարգերից ամենահեղափոխական դասակարգի իշխանությունը հաստատելը, սոցիալիստական անդասակարգ նոր հասարակություն կազմակերպելը:

Հենց այս պատճառով ել Հոկտեմբերյան հեղափոխության հաղթուրյան արմատական բեկում ենշանակում մարդկության պատմության մեջ, արմատական բեկում համաշխարհային կապիտալիզմի պատմական ճակատագրում, արմատական բեկում համաշխարհային պրոլետարիատի պատմագրական շարժման մեջ, արմատական բեկում՝ համայն աշխարհի շահագործվող մասսաների պայքարի յեղանակները ու կազմակերպման ձևերի մեջ, կենցաղում ու արագիցիաներում, կուլտուրայի ու գաղափարախոսության մեջ:

Սրանում և այն բանի հիմունքը, վոր Հոկտեմ-

բերյան հեղափոխությունն ինտերնացիոնալ, համաշխարհային կարգի հեղափոխություն եւ:

Սրանում և այն խորը համակրանքի արմատը, վոր տածում են զեպի Հոկտեմբերյան հեղափոխությունը բոլոր յերկիրների ճնշված դասակարգերը՝ նրա մեջ տեսնելով իրենց աղատագրման գրավականը:

Կարելի յե նշել մի շարք հիմնական հարցեր, վորոնց գծով ընթանում ե Հոկտեմբերյան հեղափոխության ներգործությունն ամբողջ աշխարհի հեղափոխական շարժման զարգացման վրա:

1. Հոկտեմբերյան հեղափոխությունը, ամենից առաջ նրանով ե նշանավոր, վոր նա ճեղքեց համաշխարհային իմպերիալիզմի ֆրոնտը, գահավիժեց իմպերիալիստական բուրժուազիային՝ կապիտալիստական ամենամեծ յերկիրներից մեկում և իշխանության գլուխ կանգնեցրեց պրոլետարիատին:

Վարձվողների դասակարգը, հալածվածների դասակարգը, ճնշվածների ու շահագործվողների դասակարգը մարդկության պատմության մեջ առաջին անգամ բարձրացավ մինչև իշխող դասակարգի դրության՝ իր որինակով վարակելով բոլոր յերկիրների պրոլետարներին:

Սա նշանակում է, վոր Հոկտեմբերյան հեղափոխությունը բաց արեց նոր դարաշրջան, պրոլետարական հեղափոխությունների դարաշրջան՝ իմպերիալիզմի յերկիրներում:

Հոկտեմբերյան հեղափոխությունը կալվածատեսերի ու կապիտալիստների ձեռքից վերցրեց արտադրության գործիքներն ու միջոցները և նրանց դարձրեց հասարակական սեփականություն՝ հակագրելով այսպիսս. բուրժուազիան սեփականությանը սոցիա-

լիստական սեփականությունը՝ Հենց սրանով ել նա  
մերկացրեց կապիտալիստների սուտն այն մասին, թե  
բուրժուական սեփականությունն անձեռնմխելի, սրբա-  
զան, հավիտենական ե:

Նա խլեց բուրժուազիայից իշխանությունը, զըկեց  
բուլ ժուազիային քաղաքական իրավունքներից, կոր-  
ծանեց բուրժուական պետական ապարատը և հանձնեց  
իշխանությունը խորհուրդներին, այսպիսով, հակա-  
դրելով բուրժուական պառամենտարիզմին, վորպես  
կապիտալիստական դեմոկրատիայի՝ խարհուրդների սո-  
ցիալիստական իշխանությունը, վորպես պրոլետարական  
դեմոկրատիա: Լաֆարգն իրավացի յեր, յերբ նա դեռևս  
1887 թ. ասում եր, թե հեղափոխության հենց հե-  
տեւյալ որը «նախկին բոլոր կապիտալիստները կզբկվեն  
ընտրական իրավունքներից»: Հոկտեմբերյան հեղափո-  
խությունը հենց սրանով ել մերկացրեց սոցիալե-  
մոկրատների սուտն այն մասին, թե այժմ հնարավոր  
և խաղաղ անցումը սոցիալիզմին բուրժուական պառ-  
լամենտարիզմի միջջոցով:

Բայց Հոկտեմբերյան հեղափոխությունը կանգ  
չառագ և չեր ել կարող կանգ առնել սրա վրա: Քան-  
դելով հինը, բուրժուականը՝ նա ձեռնամուխ յեղավկա-  
ռուցելու նորը, սոցիալիստականը՝ Հոկտեմբերյան հե-  
ղափոխության տասը տարին՝ կուսակցության, արհ-  
միությունների, խորհուրդների, կոռպերացիայի, կուլ-  
տուրական կազմակերպությունների, տրանսպորտի,  
արդյունաբերության, կարմիր բանակի կառուցման  
տասը տարի յեւ Սոցիալիզմի անկասկածելի հաջողու-  
թույնները ԽՍՀՄ մեջ շինարարության ֆրոնտում  
ակնրախորեն ցույց տվին, վոր պրոլետարիատը կա-  
րող է հաջողությամբ յերկիր կառավարել՝ առանց բուր-

ժուազիայի և բնդիմ բուրժուազիայի, վոր նա կարող  
է հաջողությամբ կառուցել արդյունաբերություն՝  
առանց բուրժուազիայի և բնդիմ բուրժուազիայի, վոր  
նա կարող է հաջողությունը՝ առանց բուրժուազիայի  
և բնդիմ բուրժուազիայի, վոր նա կարող է հաջողու-  
թյամբ սոցիալիզմ կառուցել՝ չնայած կապիտալիստա-  
կան շրջապատմանը: Հին «թեորիան» այն մասին, թե  
ինչպես վոր գլուխն ու մարմնի այլ մասերը չեն կարող  
կառավարվել առանց ստամոքսի, այնպես ել շահագործ-  
վողները չեն կարող կառավարվել առանց շահագործող-  
ների՝ միմիայն հնագարի պատմության՝ հռոմեական  
հայտնի սենատոր Մենենիոս Ազրիայի արժանիքը չե:  
Այդ «թեորիան» ներկայումն հանդիսանում է սոցիալ-  
գեմոկրատիայի քաղաքական «Փիլիսոփայության» ան-  
կյունաքարը՝ առհասարակ, իմպերիալիստական բուր-  
ժուազիայի հետ կալիցիա կազմելու՝ սոցիալգեմոկրա-  
տական քաղաքականության անկյունաքարը՝ հատկա-  
պես Այդ «թեորիան», վոր ստացել ենախապաշարմուն-  
քի բնույթ՝ կապիտալիստական յերկիրների պրոլետա-  
րիատի հեղափոխականացման ճանապարհին ընկած  
ամենալուրջ արգելքներից մեկն են ներկայումս: Հոկ-  
տեմբերյան հեղափոխության կարեռագույն հետեւանք-  
ներից մեկն այն փաստն ե, վոր նա այդ սուտ «թեո-  
րիային» մահացու հարված հասցրեց:

Ել արդյոք պետք կա ապացուցելու, վոր Հոկտեմ-  
բերյան հեղափոխության այդ և դրանց նման հետեւանք-  
ները չելին կարող և չեն կարող մնալ առանց լուրջ  
ազգեցության կապիտալիստական յերկիրների բանվոր  
գասակարգի հեղափոխական շարժման վրա:

Հանրածանոթ այնպիսի փաստեր, ինչպիսիներն են՝

կոմունիզմի առաջընթաց շարժման ծավալումը կապիտալիստական յերկիրներում, ԽՍՀՄ բանվոր դասակարգի նկատմամբ բոլոր յերկիրների պլոյետարների ունեցած համակրանքի աճումը, վերջապես, բանվորական պատգամավորությունների խուռն բազմությամբ (հառլայ) Խորհուրդների յերկիրը գալը՝ անկասկածությամբ խոսում են այն մասին, վոր Հոկտեմբերյան հեղափոխության դցած սերմերն արդեն սկսել են պտուղներ տալ:

2. Հոկտեմբերյան հեղափոխությունը սասանեց իմպերիալիզմը վոչ միայն նրա տիրապետության կենտրոններում, վոչ միայն «մետրոպոլիտաններում» («մայր յերկիրներում»): Նա հարվածեց իմպերիալիզմի թիկունքներին եւ նրա պերիֆերիային ել՝ խարիլելով իմպերիալիզմի տիրապետությունը գաղութային ու կախյալ յերկիրներում:

Հոկտեմբերյան հեղափոխությունը, տապալելով կալվածատերերին ու կապիտալիստներին՝ փշոց աղքային-գաղութային ճնշման շղթաները և այդ ճնշումից աղատազրեց լայնատարած պետության առանց բացառության ըոլոր ճնշված ժողովուրդներին: Պրոլետարիատը չի կարող աղատազրել իրեն՝ չազատազրելով ճնշված ժողովուրդներին: Հոկտեմբերյան հեղափոխության ընօրոշ գիծն և այն փաստը, վորն նա ԽՍՀՄ մեջ այդ աղքային-գաղութային հեղափոխությունները կենսագործեց վոչ թե աղքային թշնամանքի ու աղքամիջյան ընդհարութիւնի դրոշի ներքո, այլ ԽՍՀՄ-յան աղքությունների բանվորների ու զյուղացիների փոխադարձ վստահության ու յեղայրական մերձեցման դրոշի:

Հենց այն պատճառով, վոր ազգային-գաղութային հեղափոխությունները մեզանում կատարվեցին պրոլետարիատի ղեկավարությամբ ու ինտերնացիոնալիզմի դրոշի ներքո՝ հենց այդ պատճառով ել ժողովուրդներ-պարիաները (իրավազուրկները), ժողովուրդներ-ստրուկները մարդկության պատմության մեջ առաջին անգամ բարձրացան այնպիսի ժողովուրդների գրության, վորոնք իրոք վոր աղատ և իրոք վոր հավասար են՝ վարակելով իրենց որինակով համայն աշխարհի ճնշված ժողովուրդներին:

Սա նշանակում է, վոր Հոկտեմբերյան հեղափոխությունը նոր դարաշրջան և բաց արել՝ դարաշրջան գտնությին հեղափոխությունների, վոր կենսագործվում են աշխարհի ննօված յերկիրներում պրոլետարիատի դաշինքով՝ պրոլետարիատի ղեկավարությամբ:

Առաջներում «ընդունված եր» կարծել, թե աշխարհը սկզբից ի վեր բաժանված և յեղել սառրին ու վերին ուսաների (ցեղերի), սկերիու սպիտակների, վորոնցից առաջիններն անընդունակ են քաղաքակրթության և դատապարտված են շահագործման առարկա լինելու, իսկ յերկրորդները հանդիսանում են քաղաքակրթության միակ կրողները, վոր կոչված են առաջիններին շահագործելու: Այժմ այդ առասպելը պետք է համարել ջախջախված ու զեն շպըտված: Հոկտեմբերյան հեղափոխության կարևորագույն հետեւանքներից մեկն այն փաստն է, վոր նա այդ առասպելին մահացու հարված հասցեց՝ գործով ցույց տալով, վոր խորհրդային գարգացման հունը ներքաշլած աղատազրված գոչ-յեփողական ժողովուրդներն ավելի պակաս ընդունակ չեն առաջ շարժելու իրոք առաջավոր կուլտուրա և իրոք

առաջավոր քաղաքակրթություն, քան յելուպական ժողովուրդները:

Առաջներում «ընդունված եր» կարծել թե ճնշված ժողովուրդների պատագրման միակ մեթոդը բուրժուական նացիոնալիզմի մեթոդն ե, ազգերը միմյանցից անջատելու մեթոդը, նրանց միմյանցից մեկուսացնելու մեթոդը, տարրեր ազգերի աշխատավորական մասսաների միջև ազգային թշնամանքն ուժեղացնելու մեթոդը: Այժմ տապալված պետք ե համարել այդ առապելը: Հոկտեմբերյան հեղափոխության կարևորագույն հետեանքներից մեկն այն փաստն ե, վոր նա այդ առապելին մահացու հարված հասցրեց՝ գործով ցույց տալով ճնշված ազգերի պատագրման պրոլետարիան, ինտերնացիոնալական մեթոդի, վորպես միակ ճիշտ մեթոդի՝ հնարավորությունն ու նպատակահարմարությունը, գործով ցույց տալով ամենատարբեր ժողովուրդների բանվորների ու գյուղացիների յիդրայական դաշինքի հնարավորությունը և նպատակահարմարությունը՝ հոգարակամուրյան ու ինտերնացիոնալիզմի հիմունքներով: Այս բանի ուղղակի պատցույց չի կարող չծառայել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության գորութունը, Միության, վորը հանդիսանում ե համաշխարհային միասնական անտեսության մեջ բոլոր յերկիրների աշխատավորների պապա միավորման նախատիպարը:

Ինչ խոսք, վոր Հոկտեմբերյան հեղափոխության այս և սրանց նման հետեանքները չեյին կարող և չեն կարող մնալ առանց լուրջ ազդեցություն ունենալու գաղութային ու կախյալ յերկիրների հեղափոխական շարժման վրա: Այս մասին են անկասկածությամբ խոսում այնպիսի փաստեր, ինչպիսիներն են՝ ճնշված

ժողովուրդների հեղափոխական շարժման ծավալումը Զինաստանում, ինդոնեզիայում, Հնդկաստանում և այլն, այս յերկիրների ժողովուրդների համակրանքի անումը դեպի ԽՍՀՄ:

Դաղութների և կախյալ յերկիրների անխռով շահագործման ու ճնշման դարագլուխն տեցավ: Հասել ե աղատազրական հեղափոխությունների դարագլուխը՝ զաղութներում և կախյալ յերկիրներում, այս յերկիրների պրոլետարիատի զարթոնքի դարագլուխը, նրա հեգեմոնիայի դարագլուխը՝ հեղափոխության մեջ:

3. Գցելով հեղափոխության սերմերն ինչպես իմակերակամի կենտրոնները, այնպես նաև նրա թիկունքները, թուլացնելով իմակերակամի հզորությունը «մետրոպոլիտաններում» և սասանելով նրա տիրապետությունը զաղութներում՝ Հոկտեմբերյան հեղափոխությանը հենց սրանով հարցականի տակ եղել ամբողջությամբ վեցրած համաշխարհային կապիտալիզմի բուն իսկ գոյությունը:

Յեթե կապիտալիզմի տարերային զարգացումը իմակերակամի պայմաններում, — այդ զարգացման անհավասարաչափության պատճառով, կոնֆլիկտների ու պատերազմական ընդհարությունների անխռուսափերիության պատճառով, վերջապես, իմակերակամական չտեսնված սպանդի պատճառով, — վերաճել ե կապիտալիզմի «նեխման» ու «մահացման» պրոցեսի, աղա Հոկտեմբերյան հեղափոխությունն ու նրա հետ շաղկապված հակայական յերկիրի պոկիլը կապիտալիզմի համաշխարհային սիստեմից չեյին կարող չարագացնել այդ պրոցեսը՝ քայլ առ քայլ վողողերով-սրբելով՝ համաշխարհային իմակերակամի բուն հիմունքները:

Դեռ ավելին, Հոկտեմբերյան հեղափոխությունը,

սասանելով իմպերիալիզմը՝ դրա հետ միասին հանձին պլութօտարական դիկտատորայի ստեղծեց համաշխարհ։ Հային հեղափոխական շարժման մի հզոր ու բացորոշ քաջա, վորը նա առաջներում յերբեք չի ունեցել և վորի վրա նա այժմ կարող ե հենվել։ Հոկտեմբերյան հեղափոխությունն ստեղծեց համաշխարհային հեղափոխական շարժման այն հզոր ու բացորոշ կենտրոնը, վորն առաջներում յերբեք չի ունեցել այդ շարժումը և վորի շուրջը նա այժմ կարող ե համախմբվել՝ կազմակերպելով բոլոր յերկիրների պրոլետարեների ու նեւված ժողովուրդների հեղափոխական միասնական ֆրոնտ ընդդեմ իմպերիալիզմի։

Սա ամենից առաջ նշանակում է, վոր Հոկտեմբերյան հեղափոխությունը համաշխարհային կապիտալիզմին մահացու վերք ե հասցրել վորից նա ել յերբեք վոտքի չի կանգնի։ Հենց այս պատճառով ել կապիտալիզմն այլևս յերբեք չի վերադարձնի իրեն այն «հավասարակշուությունը» և այն «կայունությունը», վոր նա ուներ մինչև Հոկտեմբերը Կապիտալիզմը կարող ե մասնակի կայունանալ, նա կարող ե ոացիոնալացնելիք արտադրությունը, յերկրի կառավարչությունը տալ ֆաշիզմին, ժամանակավոր ճնշել բանվոր դասակարգին, բայց նա յերբեք չի վերադարձնի իրեն այն «անդորրությունն» ու այն «վկասահությունը», այն «հավասարակշուությունն» ու այն «կայունությունը», վորոնցով նա պճնամոլում եր առաջ, վորովհետև համաշխարհային կապիտալիզմի ճնշաժամը զարգացման մի այնպիսի աստիճանի յե հասեր յերբ հեղափոխության կրակներն անխուսափելիորեն պետք ե բռնկվեն մերթիմպերիալիզմի կենտրոններում, մերթ պերիֆերիաներումի չիք գարձնելով կապիտալիստական կարկատան-

ները և որեցոր մոտեցնելով կապիտալիզմի անկումը, իսկ և իսկ ինչպես վոր հայտնի առակի մեջ ե՝ «պոչը դուրս պըծացըրեց՝ քիթը խրվեց, քիթը դուրս պըծացը բեց՝ պոչը խրվեց»։

Սա, յերկրորդ, նշանակում է, վոր Հոկտեմբերյան հեղափոխությունը վորոշ բարձրության հասցըց ամբողջ աշխարհի ճնշված դասակարգերի ուժն ու տեսակարար կշիռը, արիությունն ու մարտական պատրաստականությունը՝ հարկադրելով տիրապետող դասակարգերին, վոր նրանց հետ հաշվի նստեն՝ իբրև նոր, լուրջ գործոնի հետ։ Այժմ աշխարհի աշխատավորական զանգվածներն այլևս չի կարելի դիտել վորպես մի «կույր ամբոխ», վորը խարխափում ե մթութան մեջ և զուրկ ե հեռանկարներից, վորովհետև Հոկտեմբերյան հեղափոխությունը նրանց համար ստեղծեց մի փարոս, վորը լուսավորում ե նրանց ճանապարհը և հեռանկարներ և տալիս Յեթե առաջներում չկար մի համաշխարհային բաց փորում (հրապարակ), վորտեղից կարելի լիներ ցուցադրել և ճեավորել ճնշված դասակարգերի բաղձանքներն ու ձգտումները, ապա այժմ այդպիսի փորում կա հանձին առաջին պրոլետարական դիկտատուրայի, Հաղիվ թե կարելի յե կամկածել, վոր այդ փորումի վոչնչացումը յերկար ժամանակով կծածկեր ռառաջավոր յերկիրներից հասարակական քաղաքական կյանքը և ռեակցիայի անդուսապ խավարով։ Զի կարելի ժխտել այն, վոր «բոլշևիկյան պետության» գոյության սոսկական փաստն անգամ սանձահարում ե ռեակցիայի և ուժերը՝ հեշտացնելով ճնշված դասակարգերի պայքարն իրենց աղատագրման համար։ Հատկապես սրանով ել բացատրվում ե անսանական այն ատելությունը, վորը բոլոր յերկիրների շահագործողնե-

ըը տածում են դեպի բոլորի կները, կրկնվում ե պատմությունը, թեև նոր հիմքով՝ ինչպես վոր առաջ, ֆեոդալիզմի անկման ժամանակաշրջանում, ցյակորյան բառն եր բոլոր յերկիրների արիստոկրատների մեջ սարսափ ու գարշանք առաջացնում, այնպես ել այժմ, կապիտալիզմի անկման ժամանակաշրջանում, որուելիկ բառն ե բուրժուական յերկիրներում սարսափ ու գարշանք առաջացնում Յեվ, ընդհակառակը, ինչպես վոր առաջ Փարիզն եր հանդիսանում բարձրացող բարժառագիտայի հեղափոխական ներկայացուցիչների համար պատսպարան ու դպրոց, այնպես ել այժմ Մուկվան ե հանդիսանում բարձրացող պրոլետարիատի հեղափոխական ներկայացուցիչների համար պատսպարան ու դպրոց, Յակոբյաններին ատելը ֆեոդալիզմին չփրկեց կործանումից, Արդյոք կարելի՞յն կասկածել, վոր բոլցեկներին ատելը չի փրկելու կապիտալիզմին նրա անխուսափելի ջախջախումից:

Անցավ կապիտալիզմի «կայունության» դարագլուխը՝ իր հետ տանելով բուրժուական կարգերի անհոգողության առանպելը:

Հասել ե կապիտալիզմի կործանման դարագլուխը,  
4. Հոկտեմբերյան հեղափոխությունը միայն տնտեսական ու հասարակական-քաղաքական հարաբերությունների բնագավառում կատարված հեղափոխություն չեւ նա միաժամանակ հեղափոխություն ե բանվոր գտակարգի մտքերի մեջ, հեղափոխություն ե նրա գաղափարախոսության մեջ։ Հոկտեմբերյան հեղափոխությունը ծնվեց ու ամրապնդվեց մարքսիզմի դրոշի ներքո, պրոլետարիատի դիկտատուրայի գաղափարի դրոշի ներքո, լենինիզմի դրոշի ներքո, լենինիզմի, վորն իմպերիալիզմի ու պրոլետարական հե-

ղափոխությունների դարաշրջանի մարքսիզմն եւ Նա այս պատճառով նշանավորում ե մարքսիզմի հաղթությունն ընդդեմ ուժորմիզմի, լենինիզմի հաղթությունը՝ ընդդեմ սոցիալդեմոկրատիզմի, III հնտերնացիոնալի հաղթությունը՝ ընդդեմ II Ինտերնացիոնալի։

Հոկտեմբերյան հեղափոխությունն անանցանելի ակոս քաշեց մարքսիզմի ու սոցիալդեմոկրատիզմի միջն, լենինիզմի ու սոցիալդեմոկրատիզմի քաղաքականության միջն։ Առաջներում, մինչև պրոլետարիատի դիկտատուրայի հաղթությունը, սոցիալդեմոկրատիան կարող եր պճամուկել մարքսիզմի դրոշով՝ բացորոշ չժխտելով պրոլետարիատի դիկտատուրայի գաղափարը, բայց և վոչինչ, բացարձակապես վոչինչ չանելով այն բանի համար, վոր մոտեցնի այդ գաղափարի հրացործումը, վորովհետեւ սոցիալդեմոկրատիայի այսպիսի վարքագիծը վոչ մի սպառնալիք չեր ստեղծում կապիտալիզմի համար։ Այն ժամանակ, այն շրջանում՝ սոցիալդեմոկրատիան ձեւկանորին ձուլվում եր կամ գրեթե ձուլվում եր մարքսիզմի հետո։ Այժմ, պրօլետարիատի դիկտատուրայի հաղթակից հետո, յերբ բոլորն ակներկորեն տեսան, թե դեպի ինչ ե տանում մարքսիզմը, և թե ի՞նչ կարող են շահանակել նրա հաղթանակը՝ սոցիալդեմոկրատիան այլնս չեր կարող պճամուկել մարքսիզմի դրոշով, չեր կարող կոքետություն անհիլ պրոլետարիատի դիկտատուրայի գաղափարի հետ՝ չստեղծելով վորոշ վտանգ կապիտալիզմի համար։ Սոցիալդեմոկրատիան, վաղուց խոելով կապը մարքսիզմի վորու հետ՝ հարկադրված յեղակ կապը խզելու մարքսիզմի դրոշի հետ ել, բացորոշ ու աներկմիտ կերպով կանգնեց մարքսիզմի գաղափարի դեմ, Հոկտեմբերյան հեղափոխության դեմ, պրոլետարիատի

աշխարհում առաջին գիլկտատուրայի դեմ՝ Այժմ սոցիալիստական պետք և սահմանաձրվեր և իրոք սահմանաձրվեց մարքսիզմից, վորովհետև ներկա պայմաններում չի կարելի իրեն մարքսիստ անվանել՝ բացորդ և անձնվիրաբար չպաշտպանելով աշխարհի առաջին պրոլետարական դիկտատուրան, հեղափոխական պայքար չմղելով սեփական բուրծուազիսյի դեմ, պայմաններ չստեղծելով պրոլետարիատի դիկտատուրայի հաղթանակի համար իր սեփական յերկրում։ Սոցիալիստակատիայի և մարքսիզմի միջև անդունդ է բացվել։ Այսուհետև մարքսիզմի միակ կրողն ու պատվարը լենինիզմը, կոմունիզմն են

Բայց բանը սրանով չսահմանափակվեց, չոկտեմբերյան հեղափոխությունը, սահմանաձրելով սոցիալ-դեմոկրատիային մարքսիզմից, առաջ անցավ՝ սոցիալ-դեմոկրատիային շարտելով աշխարհի առաջին պրոլետարական դիկտատուրայի դեմ կապիտալիզմն ուղղակի պաշտպանողների բանակը, Յերբ պ. պ. Աղկերներն ու Բառերները, Վելսերն ու Լեվիները, Լոնդեներն ու Բլյումերը պարսավում են «խորհրդային ռեժիմը», գովարնելով պառլամենտական «դեմոկրատիան», ապա դրանով նրանք ուղղում են ասել, թե իրենք պայքարում են և պետք և պայքարեն կապիտալիստական կարգերը ԽՍՀՄ մեջ վերականգնելու համար, կապիտալիստական ստրկությունը «քաղաքակիրթ» պետություններում պահելու համար։ Այժմյան սոցիալիստակատիզմը կապիտալիզմի գաղտփարային նենարտեն և լենինը հաղար անգամ իրավացի յեր, յերբ նա առում եր, թե սոցիալիստակատիան այժմյան քաղաքականները «բուրժուազիայի իսկական գործակալներն են բանվորական շարժման մեջ, կապիտալիստների

դասակարգի բանվորական գործակատարներն են», թե «պրոլետարիատի քաղաքացիական պատերազմում ընդդեմ բուրժուազիայի» նրանք անխուսափելի կորեն կկանգնեն «վերսալցիների կողմն ընդդեմ կոմունարների»։ Անհետարին ե վերջ տալ կապիտալիզմին՝ վերջ չտալով սոցիալգեմոկրատիզմին բանվորական շարժման մեջ։ Այս պատճառով՝ կապիտալիզմի մահացման դարագլուխը սրա հետ միասին հանդիսանում ե սոցիալիստակատիզմի մահացման դարագլուխը բանվորական շարժման մեջ։ Հոկտեմբերյան հեղափոխության մեծ նշանակությունը, ի միջի այլոց, այն ե, վոր նա իրենով՝ նշանավորում ե լենինիզմի անխուսափելի հաղթանակն ընդդեմ սոցիալիստակատիզմի՝ համաշխարհային բանվորական շարժման մեջ,

Վերջացել ե II հնտերնացիոնալի ու սոցիալիստակատիզմի տիրապետման դարագլուխը բանվորական շարժման մեջ,

Հասել ե լենինիզմի ու III հնտերնացիոնալի տիրապետման դարագլուխը։

«Պրավդա» № 255.

6—7 նոյեմբերի 1927 թ.



10



644

ԳԻՒԾ 20 կ.

ЦЕНА 20 Կ.

11

27912